

ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻԻ 22

1 Մարտ 1897



ԿՈՄՍԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ

ՑԳՈՒՄՆ

ՃԻՎԵԼԵԿԵԱՆ

Պատշ. Այլ Հասցեի Թիւ 20

1897

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Age	Gender	Height (cm)	Weight (kg)	Body Mass Index (kg/m ²)	Waist Circumference (cm)	Waist-Hip Ratio	Trunk Flexion Angle (°)	Trunk Flexion Moment (Nm)	Trunk Flexion Torque (Nm)	Trunk Flexion Force (N)
20	Male	175	75	24.2	85	0.85	30	100	100	100
25	Male	180	80	24.7	90	0.85	35	120	120	120
30	Male	185	85	24.2	95	0.85	40	140	140	140
35	Male	190	90	24.7	100	0.85	45	160	160	160
40	Male	195	95	24.2	105	0.85	50	180	180	180
45	Male	200	100	24.7	110	0.85	55	200	200	200
50	Male	205	105	24.2	115	0.85	60	220	220	220
55	Male	210	110	24.7	120	0.85	65	240	240	240
60	Male	215	115	24.2	125	0.85	70	260	260	260
65	Male	220	120	24.7	130	0.85	75	280	280	280
70	Male	225	125	24.2	135	0.85	80	300	300	300
75	Male	230	130	24.7	140	0.85	85	320	320	320
80	Male	235	135	24.2	145	0.85	90	340	340	340
85	Male	240	140	24.7	150	0.85	95	360	360	360
90	Male	245	145	24.2	155	0.85	100	380	380	380
95	Male	250	150	24.7	160	0.85	105	400	400	400
100	Male	255	155	24.2	165	0.85	110	420	420	420
105	Male	260	160	24.7	170	0.85	115	440	440	440
110	Male	265	165	24.2	175	0.85	120	460	460	460
115	Male	270	170	24.7	180	0.85	125	480	480	480
120	Male	275	175	24.2	185	0.85	130	500	500	500
125	Male	280	180	24.7	190	0.85	135	520	520	520
130	Male	285	185	24.2	195	0.85	140	540	540	540
135	Male	290	190	24.7	200	0.85	145	560	560	560
140	Male	295	195	24.2	205	0.85	150	580	580	580
145	Male	300	200	24.7	210	0.85	155	600	600	600
150	Male	305	205	24.2	215	0.85	160	620	620	620
155	Male	310	210	24.7	220	0.85	165	640	640	640
160	Male	315	215	24.2	225	0.85	170	660	660	660
165	Male	320	220	24.7	230	0.85	175	680	680	680
170	Male	325	225	24.2	235	0.85	180	700	700	700
175	Male	330	230	24.7	240	0.85	185	720	720	720
180	Male	335	235	24.2	245	0.85	190	740	740	740
185	Male	340	240	24.7	250	0.85	195	760	760	760
190	Male	345	245	24.2	255	0.85	200	780	780	780
195	Male	350	250	24.7	260	0.85	205	800	800	800
200	Male	355	255	24.2	265	0.85	210	820	820	820
205	Male	360	260	24.7	270	0.8				

- 1 Կրօնական բառար. Յ. Վ. ՄԻՍԻՔՅԱՆ
- 2 Նուազ կրօնական. ՆԵՐՍԷՍ Յ. Վ. ՓԱՓԱՋԵԱՆ
- 3 Աստղաբաշխականք.
- 4 Մանր գիտելիք.

Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Ե Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Եօրնեւորդ Տարի

ԹԻՒ 22

1 Մարտ 1897

ԿՐՕՆԱԿԱՆ ԹԱՏՐ



Դարավերջիկ յեղաշրջում մը սկսած է տարիներէ ի վեր երեսն ելնել Եւրոպայի այլ եւ այլ կողմերը. Քանի մը օր յառաջ իսկ Բարիգի մէջ հանդիսապէս կատարուեցաւ Քրիստոսեան Բեմական ընդ նախագահութեամբ Ժուէն Քանաւի գաղիացոյ, ու ներկայացուեցաւ Յիսուսի Զննութիւն անուամբ քատերախաղ մը՝ որ տարօրինակ յաջողութիւն ունեցաւ. լրագիրք կը յաւելուն քէ՝ ի վախճան ներկայացուցման յիշեալ երեցն յանպատրաստից ճառ մը խօսելով, պարզեց լիովին հանդիսականաց առջեւ իւր գաղափարներն ի մասին Քրիստոնեայ քատերագութեան:

Հոս եւս ի Յաւերժական Քաղաքիս՝ Հռովմէական Բանագործասէր (philodramatique) ընկերութիւնն այս ամսոյս մէջ շքեղ քատերախաղ մը տուաւ՝ Փփայլեալ Եկեղեցոյ առաջին դարուց աշխարհածանօք պատմական վեպը տեսարանի վրայ ընծայելով. Եկեղեցական ամեն դասակարգէ խռուն բազմութիւն մը ներկայ էր, յորս կը տեսնուէին երկու առաջամեծար ծիրանաւոր իշխանք. Դերասաններուն մէջ կային եւս միւս սեռէ անձիք, որոնք շատ սքանչելի ու մեծավայելուչ սարսուռ կատարեցին Փաբլովայի՝ Ագնէսի ու Սիրայի դերերն. այնպէս որ ընդհանուր գովութեան արժանի եղան:

Ուստի մտածեցինք այսոս առթիւ նուիրել քարգմանօրէն՝

ի վայելչ մերագնեայ բանասիրաց՝ Լուի Լարիւէլլ հռչակաւոր հեղինակի մը գրչեն էլած հետագայ կրօնական խորհուրդն , որ քանի ինչ շաբար առաջ միայն հրատարակուեցաւ , բարիգէտն նշանաւոր Հռիփսի մը մեջ : Յուսալից ենք թէ Պատկերի լեմբերցողը հաճութեամբ պիտի կարդան սոյն գերագանց բանագործութիւնը , եւ յորդոր պիտի ըլլայ անշուշտ իրենց նոյնին առ. մեզ եւս հետգնետե տարածմանն ու ծաւալման :

Յ. Վ. Միսնեան

Հռովմ, 15 փետրուար 1897

Յ Ի Ս Ո Ւ Ս Ե Ր Կ Ո Տ Ա Ս Ա Ն Ա Մ Ե Ա Յ

Տ Ա Ճ Ա Ր Ի Ն Մ Է Ձ

Խորհուրդ ներկայացեայ մեկ արարուածով

Ա Ն Ձ Ի Ն Ք

ՅԻՍՈՒՍ՝ Երկրտառանման .

ԿՈՒՍԱՄԱՅՐՆ ՄԱՐԻԱՄ՝ 28 տարեկան .

ՅՈՎՍԷՓ՝ առ առաւելն 45 տարուան .

ՀԻԼԼԷԼ՝ օրէնսուսոյց վարդապետ , 75 տարեկան .

ՇԱՄՄԱՅԻ

ՅՈՎՆԱԹԱՆ

ՆԻԿՈՒԵՄՈՍ

Միջին տարիքով բարունիք .

ՄԱԼՔՈՍ՝ ծառայ Քահանայապետին , 25 տարեկան .

ԿՈՒԻՆՏՈՍ՝ որդի Աթիէհիւպատոսին , 21 տարուան .

ԱՆՆԱ ՄԱՐԳԱՐԷՆՈՒՀԻ՝ 96 տարեկան .

ԿԼԱԻԴԻԱ՝ դուստր Աթիէհիւպատոսին , 20 տարուան .

Փարիսեցիք , ժողովուրդք եւլն .

Տեսարանն է Երուսաղեմայ տաճարին մէջ՝ Գաղիթ կոչուած սրահն , որ ընդարձակ արքունի ապարանք մ'է քառակուսի քարերով շինուած՝ առ երկ քահանայից ու խորայեղացւոց գաւթին : Այլ ու ձախ՝ կամարակապ զանաւանդ կան , կորնթական սիւներով զարդարուած եւ սպիտակ մարմարիոնէ , Դէպ ի ներքսակողմը՝ կիսաբլուր բարձր տախտակամած մը կը տեսնուի , կարգ ըստ կարգէ բարձերով յարդարեալ :

Տ Ե Ս Ի Լ Ա.

ԿԼԱԽԴԻԱ, ԿՈՒԻՆՏՈՍ, ՄԱԼՔՈՍ

Մալքոս (մատնանիշ ընելով աջակողմեան դանլիճն)

Ա՛լ աւելի առաջ չեմ կրնար տանիլ զձեզ. ահաւասիկ սահմանն՝ որմէ անդին ղեւտացիք միայն կրնան անցնիլ. Քահանայապետն ինքնին՝ որ մինչեւ այս խորայեւացոց զաւիթը մտնելու մեծ շնորհքն ըրած է ձեզի, ամենեւին իշխանութիւն չունի թոյլ տալու որ քահանայից զաւիթն ոտք կոխէք:

Կուինտոս (բարձրամտութեամբ)

Այո, գիտեմ. Քահանայապետը՝ պարտուպատշաճ ակնածութիւնը ցուցնելով իսկ Անթիշիւպատոսին որդւոյն ու աղջկան, ուղեյ միանգամայն ազդարարել մեզի այս ծանր արգելքը. մենք կը յորգենք զայն. Բայց ի՞նչ է այն ընդարձակ սրահը:

Մալքոս

Դպիրներուն ու հրէից ատեանին ժողովարանն է. Հոս իսրայելացիք՝ մանաւանդ Պասեքի հանդիսաւոր օրերուն մէջ՝ խուռն բազմութեամբ կը լեցուն անուանի վարդապետաց շուրջը, անոնց վարդապետութիւնքը լսելու համար. Քիչ ժամանակէն ատեանը պիտի կազմուի. սովորական ժամը մօտեցած է:

Կլաւդիա

Թոյլ տրուած է արդեօք մեզի այն դասախոսութեանց ներկայ դանուելու:

Մալքոս

Քահանայապետին հրամաններն այս բանիս բնաւ արգելք մը չեն դնել:

Կուինտոս (իւր քրոջ վրայ ափնարկ մը նետելով)

Անանկ է նէ՛ սպասենք:

Մալքոս (զլուխը ծռելով ի նշան յարգանաց)

Քահանայապետին ծառայն ձեր բարեհաճութեանը պիտի սպասէ. (ու յառաջանալով դէպ ի ներսի կողմը՝ տախտակամած բարձրահանդակին մօտը կը նստի):

Կլաւդիա

Կուինտոս, տարօրինակ յուզում մը բոլոր սիրտս կը գրաւէ:

Այս վեհալայր տաճարն՝ այնքան աւագամեծար իւր անպաճոյճ պարզութեամբն հանդերձ՝ այնպիսի մեծաշուք մեծարանք մը կ'ազդէ ինձ , որուն նմանը նոյն իսկ Հռոմայ մէջ զգացած չեմ մեր աստուածոց բազիններուն ու արձանացն առջեւ :

Կուինտոս

Քեզի համար՝ քոյրդ իմ, անձանօթն ու խորհրդաւորը գերազոյն հաճոյք մ'ունին միշտ :

Կլաւդիա

Այո՛, համամիտ եմ քեզի հետ. դու լաւ գիտես՝ որ ես չառ կարդացած ու չառ մտածած եմ. յոյն փիլիսոփայք, մանաւանդ Պլատոն, լայնատարած հորիզոններ բացած են մտացոյ աչաց առջեւ. իմ մտածութիւնս՝ յափշտակեալ ու վեր ի վայր յուղեալ՝ կ'ուզէ զէպ ի անսահման էակն խոյանալ. աղօտածածանչ նշոյլներ կը նշմարեմ . բայց անոնք չեն տակաւին իմ տենչացած լոյսս. իսկ իմ հոգիս ջերմաջերմ եռանդեամբ կը ցանկայ կը փափաքի լուսոյ եւ ճշմարտութեան :

Կուինտոս (սկեպտիկեան ջփիլիսոփոսի մը պէս)

Ի՞նչ է ճշմարտութիւնը . . . չեմ կրնար ստուգիւ հասկընալ այս քու մտայուղութեանդ պատճառը. ինչո՞ւ համար սոյնպիսի վրդովմանց ու տառապանոց ետեւէ կ'ըլլատ Յիրաւի մեծամեծ բարութեանց հաղորդ ու մասնակից ըլլած են զմեզ աստուածք, ու յանցաւոր պիտի ըլլայինք մենք զիրենք ամբաստանելնուս համար : Սեպուհք Հռովմայ ու որդիք Անթիհիւստոսի մը՝ մեր գտակարգն անտարակոյս շատ վեր է ընկճեալ նուաճեալ ազգացմէ, որոնք մեր Կեսարներուն ռաից առջեւն ի հոգ եւ ի փոշի կը թաւալին : Իսկ դու՝ քոյրդ իմ, հազիւ թէ յաւերժական Քաղաքը վերադառնանք՝ ամուսին պիտի ըլլաս այնպիսի անձի մը, որուն միշտ ժպտած է բախտն, որ միահեծան Կայսեր սիրելին ու մտերինն է՝ այսինքն Պոնտացի Պիղատոսին :

Կլաւդիա

Պիղատոսի . . . այո՛, անկեղծիկ՝ ազնուասիրտ ու առատաձեռն անձ մ'է. կը հիանամ իր վրայ . . . կը սիրեմ զինքը. սակայն եւ այսու՝ իմ ճակատագիրս իրենինին հետ միացնելէ կը դողամ :

Կուինտոս

Կը դողամ :

Կլաւդիա

Մի՛թէ կարելի՞ է ինձ հանդարտ խաղաղ ըլլալ . ի՞նչպէս կրնամ մոռնալ այն զարհուրելի երազներն , որոնք զիս յաճախակի քուռնիս մէջ կը խռովեն :

Կուինտոս

Երազներ :

Կլաւդիա

Այո՛, երազիս մէջ կը տեսնեմ Պիղատոսը ծերացած՝ զէմքը կոնճմտած, աժգոյն երեսով ու դաժան նայուածքով . զժուարաւ լեռնէ մը վեր կ'ենէ . գազաթը կը հասնի . զէս ի երկինք սոսկալի յուսահատութեամբ լի ակնարկ մը կը նետէ . նոյն ատեն ուր մոլոր ձեռուքները զալարելով՝ մոլեղին ոստամբ գահավէժ զարահոս կը զլորի յանդուհոս երկրի :

Կուինտոս (ժպտելով)

Սարսափելի բան :

Կլաւդիա

Երկու անգամ՝ հինգ օրէ ի վեր՝ այս զարհուրեցուցիչ տեսիլն երեւցաւ ինծի . ի՞նչպէս չնկատեմ յայտ՝ վերին ազդարարութիւն մը :

Կուինտոս

Ես կը կարծեմ թէ տեղւոյս կիզիչ կլիմային մի արդիւնքն է այդ . մի՞թէ փրիստփայք այնքան կարեւորութիւն կուտան երազներու :

Կլաւդիա

Երէկ գիշեր իսկ դարձեալ Պիղատոս ինծի երեւցաւ , բայց երիտասարդ ու չքեղագէժ՝ ինչպէս վերջին անգամ մեր հրաժեշտի օրը զինքն տեսած էի . իմ ձեռքս իրենիցին մէջ սեղմած կը լռէի , ու երկուքնիս ալ վարդերով պսակուած հանդարտ զուարթ յառաջ կ'երթայինք ծաղկալից ճամբէ մը՝ լի անուշահոտ բուրմամբք : Յանկարծ մեր աչաց առջեւ ներկայացաւ անձանօթ մանուկ մը՝ որ զէս ի մեղի կուգար , ու կարծես թէ աղնուազութ քաղցրութեամբ կը ժպտէր ինծի : Բոլորովին յուզեալ՝ կը զիտէի զանիկայ . թեւերն ինծի երկնցուց . եւ երբ ես զինքն իմ սրբաւ վրայ պիտի ողջագուրէի՝ Պիղատոս մէկզի քաջեց աւարաւ զիս , ու մանուկն աներեսութացաւ . . . կարծեցի թէ օրհասս եկած հասած էր արդէն :

Կուինտոս

Տարօրինակ բան, յիրաւի :

Կլաւդիա

Այն մանկան պատկերը ղեռ մաքիս մէջ դրոշմուած է. այսօր՝ արթննալէս ի վեր՝ շարունակ զինքը կը տեսնեմ անշարժ իմ աչացս առջեւ Ո՛հ, երկինք (Յիսուս նոյն միջոցին կ'երեւայ) :

Տ Ե Ս Ի Լ Բ.

ՅԻՍՈՒՍ, ԿԼԱՒԴԻԱ, ԿՈՒԻՆՏՈՍ

(Մալքոս՝ ներսի դին)

Կուինտոս

Ի՞նչ ունիս քոյրդ իմ, ըսէ՛. ինչո՞ւ երեսից գոյնը կը նետէ :

Կլաւդիա

Նայէ՛, տես . . . սա՛ մանուկը

Կուինտոս

Ա՛յդ մանուկը :

Կլաւդիա

Մի եւ նոյն տարեկան, նմանակերպ կերպարանքով, նոյն եւ մի զգեստիկն հագած . . . ա՛յ, ինքն է ստուգիւ :

Յիսուս (քաղցրալից ճայնով մը՝ Կլաւդիայի)

Կինն դու՝ ինծի եկե՛ւ :

Կլաւդիա (արագընքաց գնացիւք մօտենալով)

Ահաւասիկ եմ :

Յիսուս (միշտ նոյն սիրալիր քաղցրութեամբ)

Ի՞նչ կը փնտռես այս նուիրական Տաճարիս մէջ. զուհի ընտրելոց դասէն չես :

Կլաւդիա (վրդովեալ)

Անընդդիմադրելի ձայն մը կը կոչէր կը քաշէր զիս դէս ի հոս :

Յիսուս

Հոս Իսրայելի ոչխարաց հօսն է, հոս կը մատակարարուի անոնց սուրբ վարդապետութիւնը՝ ճշմարտութեան մանանալն :

Կլաւդիա

Ես քաղցեալ եմ հշմարտութեան:

Յիսուս

«Երանի՛ք քեզի՛ որ հիմակ անօթութիւն կը զգաս, ինչու որ պիտի կշտանաս . . . » (Ղկ. Զ, 21): «Մտիկ ըրէ՛, կին գու, օր մը բոլոր ոչխարներուն մի միայն հօտ ու մի միայն հովիւ մը պիտի ըլլայ» (Յովհ. Թ, 18). «Վասն զի գրուած է թէ՛ խաւարի մէջ գնացող ժողովուրդը մեծ լոյս մը կը տեսնէ, ու մահուան ստուերներուն մէջ նստողներուն՝ արեւը կը ծագի» (Ես. Թ, 2): Դեռ ժամանակն հասած է՛: «Թող տո՛ւր որ նախ եւ յառաջ Արքանամու որդիք կշտանան» (Մրկ. Ե, 27). Բայց քաջալերուէ՛, մի՛ վախճար. «Խնդրէ՛ ու պիտի արուի քեզի, վնասէ՛ ու պիտի գտնես, դուռը զարկ ու պիտի բացուի քեզի» (Ղկ. ԺԱ, 9-10): Արթուն կեցի՛ր ու ազօթէ՛:

Կլաւդիա (շատ յուզուած)

Արթուն պիտի կենամ, պիտի ազօթեմ:

Յիսուս (գորովայից գրով)

Ու պիտի փրկուիս դուն (զայս ըսելով՝ կը հեռանայ):

Կլաւդիա

Պիտի փրկուիմ . . . Ինչ լուսապայծառ ու վաեմ ակնկալութիւն այս խորհրդաւոր խօսքին մէջ . . . : Այո՛, անշուշտ . . . պիտի փրկուիմ աշխարհակորոյս մոլորութեանց կոհակներուն մէջէն . . . : Արքուն կենա՛լ . . . ո՛հ, այսուհետեւ զգուշագոյն կ'ըլլամ: Աղօթե՛լ . . . բայց ո՛ր ուսուցչէն պիտի սովորիմ ազօթք ընելու կերպը :

(Կ'երբայ կը նստի Կուիւնտուսին աջակողմն. արդէն իսկ ունկնդիրք խումբ խումբ եկած հասած են եւ տեսարանը բազմութեամբ լեցուած է: Կուիւնտուս նշան մ'ընելով՝ Մայքոս կը մօտենայ իրեն ու Կլաւդիայի. երաժիշտք իսկոյն միանայն քաղցրանուագ երգ մը կը նուագեն ծանր ամանակով: Բաբուսնիք աջակողմեան դանյիճեն հանդիսապէս ներս կը մտնեն):

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՀԻԼԼԵԼ, ՇԱՄՄԱՅԻ, ՅՈՎՆԱԹԱՆ, ՆԻԿՈԴԵՄՈՍ, ԿԼԱԻԴԻԱ,
ԿՈՒԻՆՏՈՍ, ՄԱԼՔՈՍ, ՓԱՐԻՍԵՑԻՔ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԷ

Մայքոս (մատնացոյց կ'ընէ Կուիւնտուսի ու Կլաւդիայի մի

ըստ միոջե քաբոսիններն, որք տեսարանին մեջէն անցնելով կ'երբան կը նստին քարծր տախտակաւմածին վրայ) .

Ահաւաստիկ Շամմայի՝ անյաղթն . . . եւ Յովնաթան՝ որուն հռանդնալից խօսքը, կ'ըսեն, կ'ուտէ կը լափէ օդաթուիչ թռչուններն իսկ եւ կամ սերովբէներու կը կերպափոխէ զանոնք . . . ահա Նիկողեմոս՝ մեծասիրտն . . . եւ Հիլէլ՝ զոր Հրեայք Մովսէսի նման կը մեծարեն՝ վարդապետ ի մէջ ամենայն վարդապետաց :

Հիլէլ (Շամմային դառնալով)

Արդեօք պիտի տեսնե՞նք այսօր ալ այն անծանօթ մանուկն որուն խորին հարցումներն ու զարմանահրաշ պատասխաններն երէկ զմեզ ամենքնիս հիացուցին ապշեցուցին:

Շամմայի

Առած հաւաստի տեղեկութեանս համեմատ՝ այն մանուկը ստուղիւ Երուսաղեմէ մեկնած չէ՝ տակաւին: Նա մանաւանդ Աննա, ի ցեղէն Ասերայ, հիւրասիրած է զանիկայ իւր տունն:

Նիկողեմոս

Ամենքնիս ալ մեծապատիւ կը մեծարենք այն մարգարէութիւն, որ գրեթէ հարիւրամեայ՝ քսանընթաց տարեկան հասակէն այրի մնացած է. այն ժամանակէն ի վեր մինչեւ ցայսօր՝ անդու անդադար հոս Աստուծոյ ծառայութեան ինքզինքը նուիրած է գիշեր ցօրեկ, պահօք եւ աղօթիւք:

Շամմայի

Իմ խաւրած պատգամաւորներս թէպէտեւ հարցաքննեցին զանիկայ այդ աղուն ընտանեացն ու ծնողեան նկատմամբ, բայց ինքը լուռ ու մունջ կեցաւ: Սակայն կ'ըսեն թէ՝ Պասեքատօնին վերջին իրիկունն, երբ դժուարաւ բաղմութիւնը ճեղքելով կ'անցնէր կ'երթար, յանկարծ յեղակարծումն իւր դէմքն ալիակերպեցաւ. անծանօթ մանուկն անոր մօտենալով՝ իւր զողոջուն ձեռքէն բռնեց, ու երկուքն ալ մեղմագնաց դնացիւք առանց իրարու հետ խօսելու հեռացան դնացին ուխտաւորաց խումուն բաղմութեան մէջէն:

Հիլէլ

Սոյն խորհրդաւոր դէպքը կը վրդովէ կը խռովէ հոգիս: Ե-

րէկ իսկ՝ երբ այն մանուկը կը հարցնէր մեզի մարդարէութեանց մասին՝ ու իր հարցմամբքն ի մէջ կը բերէր Աստուածաշունչ Գրոց կանխագուշակ վկայութիւնքն Իսրայելի Փրկչին զալըստեան վրայօք, կարծես թէ վառ ու բորբոք էր սիրտս:

Շամմայի

Բոլոր գիշերը նոյն բանին յիշատակն յաճախ անդամ միաբա հկաւ:

Յովնաթան (եռանդեամբ)

Պէտք է ճշմարտութիւնն իմանալ, ո՛ւսկից կուգայ արդեօք այս մանուկը. ո՞վ է ինքն, եւ ի՞նչպէս այն մանկական հասակին մէջ կրնայ այնպիսի խորին զիտութիւն ունենալ Սուրբ Գրոց:

Նիկողիմոս

Ճշմարտութիւնն՝ երբ Աստուած ուղեւու ըլլայ՝ երեւան պիտի ելնէ:

Հիւլէլ (Նիկողիմոսին)

Շատ աղէկ զրուցեցիր: — Բայց անձ ժողովուրդը կը սպասէ մեզի. կրօնական հրահանգն սկսելու ժամն հասած է. (ոտք կ'ելլեն միւս բոլոր բաբոնեաց հետ): «Լո՛ւր Իսրայէլ, Տէր Աստ- «ուած մեր՝ Տէր մի է. եւ սիրեսցես զՏէր Աստուած քո յա- «մենայն սրտէ քումմէ եւ յամենայն անձնէ քումմէ եւ յամե- «նայն զօրութենէ քումմէ» (Բ. Օր. 2, 4-5):

Ժողովուրդն

Ամէն:

Շամմայի

Օրհնեալ ըլլաս՝ ո՞վ Տէր, Աստուած հարցն մերոց Արրահա- մու՝ Իսահակայ եւ Յակովբայ:

Ժողովուրդն

Ամէն:

Յովնաթան

Ամենազօր եւ զու Տէր, ու մեծ կարեկցութեամբ մտեալ- ներն ի մահուանէ յանմահ կեանս կը վերակուչես:

Նիկողիմոս

Անկեալները կը կանգնես, հիւանդները կը բժշկես, եւ ձեռ-

քէ չես թողուր երբեք զանոնք որ հողին ու փողոցն մէջ իրենց ննջումը կը ննջեն:

Յովնաթան

Ո՞վ կը հաւատարի կը նմանի քեզ՝ ամենակարողդ Աստուած:

Շամմայի

Սուրբ եւ Տէր, սուրբ է անուն քո, եւ սուրբք զովաբանեն զքեզ հանապազօր:

Ժողովուրդն

Ամէն:

Հիւնէ

Օրհնեալ ըլլաս Տէր Աստուած՝ որոյ անունդ բարութիւն է, ու քեզի կը վայլէ ամէն զովաբանութիւն (Բաբունիք կը նշատին՝ բաց ի Հիւնէ, որուն կը կարկառե Նիկողեմոս Աստուածաշունչին գլանամէս մագաղաբը): — Իսրայելի Ժողովուրդք մտիկ ըրէք. Եսայի մարգարէն է խօսողը. (կարդայով) «Իմ սիրելիս պարարտ ու բերրի այգի մ'ունէր բարձրաւանդակ տեղ մը. ցանկով պատեց ու ձողաքարձ որթատնկերով ալ զարգաբեց զայն. սորէկ կոչուած ընտիր որթն անոր մէջ անկեց. իսկ «մէջտեղն աշտարակ մը չինեց ու հնձանի զուր մը փորեց: Կը «սպասէր որ բարի բարի պտուղ բերէր, եւ սակայն վայրի սրբաւոր ու փուշ բերու» (Ե, 1-2): (Կը նստի առանց գոցելու մագաղաբեայ հատորն) Այս այգին՝ Իսրայէլն է, Ժողովուրդ ընտրեալ ի մէջ ամենայն ազգաց երկրի, Ժողովուրդ զստեալ՝ օրհնեալ եւ լցեալ ձրիատուր չնորհօքն Աստուծոյ, որ ի փոխարէն կը պահանջէ փառաբանութիւն ու երկրպագութիւն: Բայց ո՞րչափ անգամներ Իսրայէլ իւր ապերախութեամբն Աստուծմէ չապստամբեցաւ. քանի քանի հեղ զոհեր չղոհեց անիծակուռ ազգաց վատանշան կուռքերուն առջեւ. ո՞րպիսի վայրի պտուղներ չբերաւ՝ փոխանակ ակնկալեալ բարի բարի պտուղներու: Ուստի (առք ելնելով ու նորէն կարդայով) կ'ըսէ Աստուած նոյն մարգարէին բերնովը. «Պիտի ցուցնեմ եւ քեզի հիմակ՝ թէ ի՞նչ «պիտի ընեմ իմ այգւոյս. անոր ցանկը պիտի խլեմ հանեմ, ու «աւարի պիտի տամ զայն. պիտի կործանեմ անոր պատերն ու «տանակոխ պիտի ըլլայ» (Անդ. 5-6). (ընթերցումը կը դադրեցնեն): Ահա տեսէք ի՞նչ պատիմներ Աստուած իր արդար բարկութեամբն հասցուց մեր զլուխը. Ժողովուրդ Իսրայելի՝ մի՛

մոռնար դերութեանդ օրերը, մեր հարց կրած նեղութիւնքն ու ամօթապարս կորանքն: «Իրենք ի խաւարի եւ ի ստուերս մա-
«հու նստած էին, եւ զերի վարուած՝ ի չքաւորութեան ու եր-
«կաթի կապանաց ներքեւ կը հեծէին» (Սղմ. Ժ. 2, 10) . որով-
հետեւ զԱստուած բարկացուցած էին՝ իւր պատուիրանքները
չպահելով . (նորէն կը նստի. նոյն ատեն Յիսուս Աննա մարգա-
րեռնայն ձեռքէն բռնած՝ յառաջանալով կը մօտեւայ) :

Նիկողեմոս (միսս քաբունեաց)

Վարդապետք՝ ահաւասիկ մանուկը:

Տ Ե Ս Ի Լ Դ.

ՆՈՅՆԵՐՆ, ՅԻՍՈՒՍ, ԱՆՆԱ

Հիւլէլ

Մօտեցիր՝ մանուկը օրհնեալ, հաճելի Աստուծոյ ու մարդ-
կանց. եկե՛ւր, նստե՛ք մեր մէջը . (տեղ կը բանայ , եւ Յիսուս
բարձր տախտակամածին վրայ ելնելով՝ կ'երթայ կը բազմի Հիւ-
լի յիւս Շամմայիի մէջտեղն՝ Աննա մարգարեռնին վարն ա-
ջակողմեան դանլիճին սիւներուն միոյն քով կը կենայ) :

Շամմայի (Յիսուսին դառնալով)

Մենք զքեզ տեսած ատեննիս՝ իբր թէ փոքրիկ Սամուէլ
մարդաբէն վերկենցաղեալ կը համարինք . ինչու որ քու խօս-
քերդ՝ իրեննորուն պէս՝ զարմանալի իմաստութիւն մը կը յայտ-
նեն այդ քու մանկական հասակիդ մէջ:

Հիւլէլ

Երէկ՝ մանուկ դու, զմեզ ամենքնիս հիացուցիր քու պա-
տասխաններուդ լուսապայծառ հրաշալի յատակութեամբն. արդ
թո՛յլ տուր՝ որ քեզի նոր հարցում մ'ընեմ: Հոս զմեզ լսելու
համար ժողովեալ ամբօխն անշուշտ բարենախանձ նախանձով
պիտի վառուի՝ տեսնալով թէ սրքան այն քու մատաշ տիոցդ
մէջ Աստուծոյ վերաբերեալ իրաց խորին հմտութիւնն ունիս:

Յիսուս (արժանապատիւ քաղցրութեամբ)

Խօսե՛ք, ուրբի. պիտի պատասխանեմ հարցմանցդ:

Հիւլէլ

Ի՞նչպէս կը լուսաբանես երկնից արեւոյութիւնն:

Յիսուս

«Երկնից արքայութիւնը ծովուն մէջ նետուած ուռկանի մը կը նմանի, որ ամէն տեսակ ձուկ իր մէջը կը ժողվէ. երբոր լեցուած է՝ ցամաք կը հանեն զայն ձկնորսք՝ ու նստելով աւելցնեն ամաններու մէջ կը դնեն եւ յոռիները մէկդի կը նետեն: Այսպէս պիտի ըլլայ աշխարհքիս վերջն ալ. հրեշտակները «գալով» պիտի զատեն չարերն արդարներուն մէջէն ու պիտի «նետեն» վանոնք կրակէ հնոցն. հոն լաց ու աղրաներու կրճատը «պիտի ըլլայ»: Այն ատեն արդարները լուսաճաճանչ արեգական պէս պիտի փայլին երկնից արքայութեան մէջ» (Մտթ. Ժ. 47-50 եւ 43) :

Հիլէլ (Յեզգաբար)

Զարմանալի ճշգրտութիւն մ'ունի այս առակը: — Բայց՝ ըսէ՛ տեսնեմ, ո՞րն է ըստ քեզի զլխաւոր պատուիրանը :

Յիսուս

«Պիտի սիրես քու Տէր Աստուածդ բոլոր սրտովդ ու հոգւովդ, բոլոր մտքովդ ու զօրութեամբդ. այս է ամենէն մեծ ու «առաջին» պատուիրանն: Իսկ երկրորդն՝ յար եւ նման է ասոր . «պիտի սիրես քու ընկերդ քու անձիդ պէս: Այս երկու պատուիրանքներուն մէջ ամբողջ օրէնքն ու մարդարէները պարուստ են» (Մրկ. ԺԲ, 30-31 եւ Մտթ. ԻԲ, 40) :

Հիլէլ

Իրաւընէ՛ Աստուծոյ Հնորճքն ի քեզ է:

Յովնաթան

Երբոր կ'աղօթես՝ ինչպէս կը խօսիս Աստուծոյ:

Յիսուս

Ահաւասիկ իմ աղօթքս (ուր կ'եյնե, եւ աչուքներն երկինք վերցուցած՝ ձեռնամած՝ գրագին սրտիս ծանր ծանր հատիկ հատիկ կը գրուցե «Հայր մեր»-ը ⁽¹⁾, իւրաքանչիւր խօսքին ամբողջ նշանակութիւնը տալով) :

«Որ ի յերկինս ունիս զարու՝ Հայր մեր անունդ սուրբ լիցի: Արեւոյտընն քա եկեացէ, եւ կամք քոյին պաշտելի՝

(1) Ներուի մեզի գնել հոս սոյն Տէրունական Աղօթքն յանգաւոր ոտանաւորով՝ զոր ամեք յառաջ զրի առած էինք, պահելով ամէն մէկ հայցուածին ճիշդ իմաստն ու ձեւը: Ծ. Թ.

« Որպէս յերկին՝ նոյնօրինակ կատարեցին առտ յերկրի։

« Զհանապազարդ տա՛ւր նրբրեղոցս հաց բառ աւուր պարենի։ —

« Թո՛ղ բզկաբառիս մեր յանցանաց, որպէս եւ մեք բողո՛ւմք Հա՛յր
« Որոց առ մեզ են պարտադան. ի վաւրճութիւն մի՛ գմեզ տար.
« Այլ ի չարին վրկեա՛ հաղրից, Զի բագաւոր ես արդար,
« Եւ գորութիւն է քեզ վառօք ի յաւիաեանս անպառ »։

*Բաբունիք եւ ժողովուրդն (եռանդնայից խանդով ի մի բերան)
Ամէն. ամէն։*

Շամմայի

*Վսե՛մ աղօթք. օրհնեալ ըլլաո՛ւ միջ Աստուած, որ ի չրթունս
մանկան աղայոյ միայ սոցնախի խօսքեր կը դնես (Մարիամ եւ
Յովսէփ այս միջոցիս կը տեսնուին)։*

Տ Ե Ս Ի Լ Ե.

ՆՈՅՆՔ, ՄԱՐԻԱՄ, ՅՈՎՍԷՓ

*Մարիամ (յառաջանալով մինչեւ բարձր տախտակամածն)
Որդեակ իմ։*

(Յիսուս, իսկոյն ոտք կ'ելնէ ու կ'երբայ Աստուածամօր
բազկացը մէջ կը նետուի)։

Մարիամ (բաղդրայից յանդիմանութեան շեշտով մը)

*Որդեակ իմ, ինչո՞ւ համար մեզի հետ այսպէս վարուեցար.
ահա՛ քու հայրդ՝ որ երեք օրէ ի վեր զքեզ կը փնտռէր ինծի
հետ, տե՛ս թէ ո՞րքան վշտայից ու տառապաղին ողւոյ՛։*

Յիսուս (գորովացութիւն ու հաստատաբան ձայնով)

*Ինչո՞ւ համար կը փնտռէիք զիս. չէի՞ք զիտեր (մատնացոյց
ընելով երկիւնքն) որ՝ ես իմ Հօրս սպասաւորութեան գործե-
րովը պէտք է զբաղիմ։*

(Մարիամ գլուխը կը խոնարհեցնէ. — Յիսուս՝ անոր մեռ-
քն բռնած՝ Յովսէփայ կը մօտենայ, որ անկիւն մը քաշուած
կեցած էր, ու խանդաղատանօք կ'ընդգրկէ գանիկայ)։

Աննա (յառաջ գալով)

Երանի՛ որովայնին, որ կրեց զքեզ։

Յիսուս (վեհափառ, կերպով)

« Նա մանաւանդ երանի՛ր անոնց , որոնք Աստուծոյ խօսքը
« կը լսեն ու կը կատարեն » (Ղկ. ԺԱ, 27-28) :

(Անցա կը խոնարհի երկրպագելով. Յիսուս հեռուանց կ'օրհ-
նէ զանիկայ, եւ իւր մօրն ու Յովսէփայ մեռքին բռնած կը
մեկնի) :

Տ Ե Ս Ի Լ 2.

ՆՈՅՆԵՐԸ, ԲԱՅ Ի ՅԻՍՈՒՍԷ՝ ՄԱՐԻԱՄԷ ՈՒ ՅՈՎՍԵՓԷ

Յովնաթան (Հիլլէլին խօսելով)

Ո՞վ կրնան ըլլալ արդեօք այս մարդիկ . հազած զղեստնին
կը ցուցնէ՝ որ ստորին վիճակի կը պատկանին :

Հիլլէլ (իբր քէ երագ տեսնելով)

Այո՛, անհաս անքննելի խորհուրդ մ'է այս . Յաճախ ըսած
եմ եւ զարձեալ համոզմամբ նոյնը կը կրկնեմ թէ՛ ոչ ոք առանց
դաստիարակութեան չկրնար չարէն հեռու կենալ. ոչ ոք ի սոս-
կալեալաց չէ՛ կարող բարձրանալ մինչեւ յաստուածպաշտութիւն .
ի՞նչպէս կարելի է որ այդ զարմանահրաշ մանուկն աղքատ ըն-
տանեաց մը զաւակ ըլլայ :

Մալքոս (մօտենալով՝ ծանր կերպարանքով մը)

Ես կը ճանչնամ զանոնք :

Հիլլէլ

Խօսէ՛ ուրեմն՝ Մալքոս :

Մալքոս.

Քաջանայապետին ծառայութեանը մտնելէս առաջ՝ Գալի-
լիոյ մէջ Հերովդեսին կը ծառայէի ու պահապան զրուած էի ա-
նոր շատ գեղեցիկ կառուածքի մը վրայ՝ Նազարեթի չրջակա-
ները . Ստէպ գործ կ'ունենայի սոյն փոքրիկ քաղքին հիւսանն
հետ. նոյն իսկ ինքն էր որ քիչ մ'առաջ տեսաք. անունն Յով-
սէփ է . իւր որդեակն մանկութեան հասակէն ի վեր իրեն կ'օգ-
նէր այն իր աշխատանաց մէջ :

Յովնաթան

Եւ իւր մանկամարդ ամուսինը :

Մալքոս

Քիչ անգամ կը տեսնուէր անիկայ, որովհետեւ տան մէջն
առանձնացած կ'ապրէր, կարծեմ թէ Մարիամ կը կոչեն զինքը:

Հիւլէլ

Դուք ի՞նչ կ'ըսէք՝ բնորոշիք. այս մատաղօրեայ մարդարէն
այս հանդերձեալ նոր Սամուէլն՝ հիւսան մը որդին ըլլայ:

Շամմայի

Այո՛ հիւսան մը՝ Գալիլեացիի մը զաւակը:

Յովնաթան

Միթէ կարելի՞ է որ Նաղարեթէն բարի բան մը յառաջ դայ:

Նիկողեմոս (Հիլլէիին)

Եւ սակայն՝ վարդապետ, դուն էիր ըսողն որ Աստուծոյ
շնորհքն այդ մանկան վրայ է:

Հիւլէլ

Կը խոստովանիմ որ՝ մեծ յուզում պատճառեց ինքն ինծի .
իւր մանկական հասակն ու շնորհադարձ կերպարանքը մեր ա-
մենքնուս սիրտն ապշեցուցին զարմանալիօք: — Բայց Աստ-
ուած չընէ, որ ես հիւսան մը որդւոյն վրայ կարի յոյժ հոգ ընեմ:

Յովնաթան

Արդէն իսկ չափէն աւելի զբաղեցանք իւր անձին վրայօք.
(ունկնդիրք հետզհետեւ կ'եյնեն կ'երբան. անդին երկու փարի-
սեցիք հեկզցօրէն ծիծաղելով՝ ուսերնին կը բոբլեն): — Կը տես-
նէ՞ք, Ժողովուրդը կը մեկնի կը հեռանայ, եւ ալ այսուհետեւ
վտանգութիւն չպիտի ունենայ մեր լուսաբան իմաստութեան
վրայ:

Հիւլէլ

Երթանք մտնենք ի Սրբարանն, ու պաղատինք Որ էն Աս-
տուծոյ՝ որպէս զի ապագային մէջ զերծ պահէ իւր հաւատարիմ
ծառաներն այսպիսի նեղապատիւ երեւոյթներէ (դուքս կ'եյնէ
աջակողմեան դահլիճէն՝ ընկերակցութեամբ Յովնաթանայ: —
Նիկողեմոս կը մօտենայ Աննա մարգարէուհոյն):

Տ Ե Ս Ի Լ Է.

ՇԻԿՈՂԵՄՈՍ, ԱՇՆԱ, ԿԼԱԻԴԻԱ, ԿՈՒՆՏՏՈՍ

Նիկողեմոս (վրդովեալ)

Ո՛վ մեծարգոյ կ'ին դու՝ իմ խռովեալ հոգիս քեզի կը դիմէ

իւր անձկութեան մէջ. մի մերժեր քեզմէ խնդրելիք լոյսս . . .
Ընչ ղիտես այդ մանկան վրայօք:

Աննա

Դուն ուղիղ սրտով անձ մ'ես, ու հաւատքով կը սպասես
Իսրայելի փրկութեանն: Ուստի պիտի պատասխանեմ քեզի:

Նիկողեմոս

Խօսէ՛, ո՛հ խօսէ՛. ո՞վ է այդ մանուկը:

Աննա (աչքերն երկինք վերցուցած՝ ներշնչեալ դեմքով մը)

Ո՛վ ամենակարողդ Աստուած, ո՛րքան խորախորհուրդ ես
քու ճամբաներդ. աշխարհքիս ղրտուններէն կը ծածկես այն մեծ
խորհուրդը, զոր խոնարհ ազախնոյ մը կը յայտնես. այդ մա-
նուկը . . .

«Արդ՝ ո՛վ Աստուած՝ գիտալսին ա՛ն. բնկալ,

«Զի տեսին աչք իւր բզգբրկիւնս առափեալ.

«Ազգք եւ ազինք տեսցեն բզկոյսն այն շողալ,

«Հեքանուսաց ջաճ՝ Հրբէից փառք եւ փալ»:

Կլաւդիա (որ կամաց կամաց Աննայի մօտեցած էր)

Լոյս հեթանոսներուն. — այո՛ կը զգամ կը տեսնեմ, հո՛ս է
այն լոյսն: Ո՛վ մեծազօրդ Աստուած, գերազոյն մեծվայելու-
թիւն, Աստուած Սոկրատայ ու Պլատոնի, Աստուած լուսոյ եւ
ճշմարտութեան, այո՛ հոս է քու բնակութեանդ ակուն, հո՛ս պէտք
է որ ես զքեզ վնասեմ: (Աննայի ու Նիկողեմոսի դասնալով)
Ո՛վ դուք որ կը տեսնէք ու զիտէք, ո՛հ առաջնորդեցէք իմ դո՛ղ-
զոջուն քայլերուս եւ զիս ճշմարտութեան ճամբուն վրայ զրէ՛ք:

Աննա (Նիկողեմոսը մատնացոյց ընելով)

Դո՛ւստրդ իմ՝ Աստուածային օրինաց մէջ ուսեալ վարդա-
պետ մը կը նմանի այն տանալիւրջ, որ իւր գանձէն հին ու նոր
բաներ կը հանէ: — Խորհրդակցէ՛ ուրեմն այս գիտուն անձին
հետ. ամբողջ ճշմարտութիւնը մեր Սուրբ Դրոց մէջն է:

Կլաւդիա (ընդոստմամբ)

Վարդապետ՝ կ'ուզեմ առ Աստուած երթալ:

Նիկողեմոս

Քաջալերուէ՛. նոյն իսկ ամենակարողն Աստուած է զքեզ
առ ինքն կոչողը:

(Յետոյ մարգարեանոյն դառնալով)

Կին զու՝ կ'աղաչեմ, խօսք մ'ալ ունիմ քեզի, Եսայի մարգարէն ըսած է թէ « Կոչս մը պիտի յղանայ » (Ե, 14) . և Միքայի մարգարէութեան մէջ ամէն օր կը կարգամ սա խօսքերը, « Բեզմէ՝ Բերկեմէ՝ Խարայի իշխանը պիտի ելնէ » (Ե, 2) :

Աննա (տեսարանին առաջակողմը քաշելով զանկալ քեռեն, ու ցած մայնով իրեն մինակուկ խօսելով).

Մտիկ ըրէ . . . այն մանուկն իրօք . . . Բերկեմի մէջ ծնած է (խսկոյն իւր հիացման մէջ կը յտիշտակուի):

Նիկողոսմոս

Բեթլեհէմ :

Աննա

Իսկ իւր մայրն . . . (առելի ցած ու խորհրդագգաց կերպարանքով) իւր մայրն . . . է միշտ կոյս ի մայրութեան իւրում:

Նիկողոսմոս

Ո՛վ մեծդ Աստուած . . . հողիս վեր ի վայր յուղեալ է : (Ջեռքերն իրարու կցելով ու աշուրներն երկինք բարձրացնելով) Կ'ուզեմ հաւատալ՝ Տէր, զուհի օգնէ՛ իմ անհաւատութեանս . . . (Կլաւիկային դառնալով՝ որ մօտ եկած էր) Տես . . . կարծես թէ աստուածային հողին կը ներշնչէ այս մարգարէունին . . . մտիկ ընենք ամբողջմամբ մտաց ու սրտադիւրութեամբ իւր խօսքերն:

Աննա (մարգարեակիր հոգեով այլակերպեալ)

Ո՛հ երկինք . . . ի՞նչ կը տեսնեմ . ո՛ր կը տանիք այդ աբիւնաթաթաւ զոհն. որո՞ւ համար պատրաստուած են այն նախատական մահուան գործիքները: Սոսկալի բան . . . « Ծակեցիք անոր ոտուքներն ու ձեռքերն , և համբեցիք իր բոլոր « ոսկրները » (Սղ. ԻԱ, 18) : « Չանիկայ տեսողները կ'արհաւիրեն ու կը ծաղրեն զինքն, և զուգորդին չարմելով կ'ըսեն. « իր յոյսն Աստուծոյ վրայ դրած էր, թո՛ղ զայն Տէրն ու ազատէ « փրկէ զինքն՝ եթէ կը սիրէ զանիկայ » (Անդ. 8-9) : « Հեղեալ « ջուրի պէս է, իր ամէն ոսկրները տեղերնէն խախտեցան . ի՞նչ « բնն սիրտն՝ իւր որովայնին մէջ՝ իբր թէ հալած մոմ դարձած « է. իր բոլոր զօրութիւնը չորցած ոսկռած է. իւր լեզուն կը « ցած փակած է քիմքին » (Անդ. 15-16) : « Ծարաւի է, ու զուք « իրեն լեզի ու քացալի կը խմբենք » (Սղ. ԿԸ, 22) : Մեծ ձայն

մ'ըկ'արձակէ. զլուխը կը խոնարհեցնէ. միտաւ (իւր դէմքին
զարմուրեցուցիչ արտայայտութիւնը կամաց կամաց լուսանշոյլ
կերպ մը կ'առնու). — Մեռաւ, եւ մենք կը կենդանութեամբ :
Երկինք ու երկիր իրարու հետ հաշտուեցան : Ո՛վ Աստուած ,
օրհնեալ ըլլաս . . . աղքատները կշտացան . որոնք որ զԱստ-
ուած կը խնդրեն՝ յաւիտեանս պիտի օրհնաբանեն զինքն ու եր-
ջանիկ պիտի ըլլան : — Փառք՝ պատիւ՝ գովարանութիւն եւ օրհ-
նութիւն Գառիմն Աստուծոյ, որ աշխարհքիս մեղքերը կը ջնջէ
(դողդղալով՝ Կլադիայի բազկացը վրայ կը կոթնի Աննա) :

Կլաւդիա (պաղատաւոր ձայնով)

Մի՛ թողուր զիս. ո՛հ, դու պիտի հրահանգես զիս, դուն իմ
առաջնորդս պիտի ըլլաս. ես կ'ուզեմ այդ աստուածային ման-
կան գնացած ճամբէն քալել :

Կուինտոս (հենգնական ծիծաղով մը)

Աստուածային մանուկ . . . հիւսան մը որդին :

Աննա (բոլոր մարմնովը շիտակ կանգուն կենալով ու եր-
կինքը ցուցնելով հանդիսական ձեւով) .

Որդին . . . Աստուծոյ :

(Վարագոյրը կը քաշուի)

Թարգմանեց Գաղիերէնէ

Յ. Վ. ՄԻՍԳՃԵԱՆ



ՆՈՒԱԳ ԿՐՕՆԱԿԱՆ



ԵՐԿԻՆՔ

Եւ պարտասեալ յաշխարհէ, անհրապոյր զաչս իմ հէք
Յածէի եւ սոտ եւ անդ, հայէի 'նդ բնաւ սրբաարեկ,
Ո'չ բընութիւն ճոխազարդ, ո'չ գարնային դեղ, չընորհ
Ո'չ զօրէին արկանել հոգւոյս ի խորշ խանդ մի նորս

Քաղցրախոտջ այն վըտակ, ալեատոտան Ովկէան,
Նըսեմաստուեր անտառակ, խորհրդաւոր մայրեստան,
Վարդն եւ մեխակ սիրաթոյր, անուշակ շունչ սրղոխին
Եւ ո'չ բուրմունք եթերին ո'չ զիմ ըզսիրտ գերէին

Սաղարթադեղ ընդ թուփս հոծ՝ սոխակն ի զո՛ւր գեղգեղէր,
Աւետաւոր ծիծառնիկ ի զո՛ւր բաղլիէր զիւր թեւեր,
Ի զո՛ւր ժպտէր ցընծուն այգ, ծաղկունք ի զո՛ւր փթթէին

Բայց ո'չ ի զո՛ւր փայլիս դու, ո' կապուտակդ իմ երկին,
Զեփեւ սըրտիս, կեանքիս լոյս, դու մեր հոգւոց հայրենիք,
Ի Քեզ են աննչք իմ, ի քեզ՝ իմ լոյսը սէր եւ բարիք

ՆԵՐՍԷՍ Յ. Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԲՆԱԽՕՍԱԿԱՆՔ



Թուցնոց երազութիւնն. — Տատրակներու եւ առհասարակ
թռչնոց երազութիւնն վերջի ժամանակներուս մեծ քննութիւն-
ներէն մին է։ Շատերն շատ թուեր տուած են. սակայն փորձի
վրայ հիմնեալ չլլալով՝ անընդունելի են ։ Այսպէս մաքաղուկի
(martinet) երազութիւնն Պ. Spalanzani 89 մեղր կ'ըսէ երկ-
վայրկենի մէջ, իսկ տատրակներուն 51։

Նոր դիտողութեան մը համաձայն՝ որ վերջերս Անվերսի մէջ կատարուեցաւ, ծիծառնի երազութեան չափն կը հասկցուի Պ. Verschuner հասարակաց մաքրութեան պաշտօնեայն՝ սլաւատին խորշերէն միոյն մէջ բռնուած ծիծեռնակ մը բռնելով՝ գունաւորեց նշանի համար, եւ մայիս 16 շաբաթ օր դէպ ի Գոմբիէներ ճամբայ ելլող տատրակներու ընտելիչ ընկերութեան անդամոց յանձնեց տատրակներուն հետ:

Կիրակի 17 մայիս՝ առաւօտուն՝ 7¼ ին ծիծեռնակը տատրակներու հետ արձակուեցաւ. ամբողջ Գաղղիոյ եւ Պելճիոյ վրայ հիւսիսային տկար հողէ կը շնչէր: Տատրակներն մինչեւ իրենց ուղղութիւնն շտկելով օձապտոյտ կը թաւալէին, ծիծեռնակն կայծակի արագութեամբ հիւսիսի ուղղութիւնն բռնեց:

Ժամը 8, 23 ին սիրուն ծիծեռնակն կը մտնէր Անվերս եւ Քարողչաց պողոտայէն անցնելով կը մտնէր բունիկին մէջ. շատ եւն ալանատես վկայքն:

Առաջին տատրակներն հազիւ ժամը 11½ ին հասան իրենց բունն:

Այս 236 հազարամեղր ընթացքն ժամ մը եւ ութ վայրկեանի մէջ կտրած էր ծիծեռնակն, որ է 58 մեղր թռչելի մէջ: Մինչեւ տատրակներն ժամու մէջ 57 հազարամեղր միայն կտրելով՝ թռչելի մէջ 15 մեղր ըսել է: Մայիս 31 ին փորձը սլափ կրկնուէր աւելի հեռուէն:

Այս 58 մեղրն թռչելի մէջ՝ կ'իմացունէ ծիծեռնակի երսուգութիւնն: Ափրիկէի հիւսիսէն մինչեւ Գաղղիոյ հիւսիսային ծովեղրն՝ հազիւ կէս օր սլափ դնէ:

Տատրակներու վրայ կատարուած բաղմամբիւ փորձերուն մէջ կրնանք յիշել Պ. Keen ի փորձն, որ 320 զօրաւոր ձագուկներու մէջ՝ 150 մեղրէ մինչեւ 200 հազարամեղր հեռաւորութեան համար՝ 90% ըն թռչելի մէջ մինչեւ 18 մեղր կ'ընթանան. բուն 18 մեղրի համեղներու թիւն 12% է. իսկ մեծագոյն մասն՝ 73%՝ 14 մեղրէ մինչեւ 18 կտրելով: Աւելի համառօտ ընթացքի մէջ՝ 80 էն մինչեւ 160 հազարամեղր՝ երազութիւնն նուազ է քիչ մը, 2914 պզտիկ տատրակներու համար. թէպէտ եւ բարձրագոյնն միշտ նոյն թռչելի մէջ 21 մեղր է, իսկ աւելի կըտրողները 1 կամ 3%:

Ուրիշ փորձառու մը՝ Պ. Rodenbach մինչեւ 32 մեղր եւ բազմութիւն տեսած է այս ձագերու վրայ թռչելի մէջ. որով

յայտնի է՝ թէ մեր արշաւատոյր չողեկաոք չատ դոնդաղ են համեմատութեամբ:

Եւ այս յայտնի է, վասն զի երազութիւնն այդ թուէն աւելի է թէպէտ՝ բայց օղոց հոսանքն օձապառլոյսներ ընկու ըստիպելով զձադուկն՝ կ'երկարէ ժամանակն. եթէ ուղիղ դժով ընթանար՝ չատ աւելի պիտի սուրար:

Այս թուերուն զիմաց կը գնենք անցեալ տարի Բարիզի Petit Journal ին ըրած փորձերուն արդիւնքն. ամենէն բարձր թուերն՝ հեռաւորութեան հետ նկատելով՝ են.

21	մեզր	բոպէի	մէջ.	150	հաղարամեզր
20	»	»	»	343	»
19	»	»	»	425	»
11	»	»	»	615	»

Կատու. եւ մուկ. — Այս վերնագրով Cosmos թերթի 596 թիւն հետեւեալ հետաքրքրականն կը գրէ. եթէ ճշմարիտ է՝ այլ եւս երկու ոխերիմ հակառակողքն կատու. եւ մուկ չենք կրնար անուանել:

Զանազան ցեղերու վերաբերող կենդանեաց մէջ բարեկամութիւն հաստատել դժուարին չէ, ոչ ալ չտեսնուած բան: Մանաւանդ երբ մատղաշ ձագերն իրարու հետ ընտանեցունելու աշխատինք: Ոմանք ընական կերպով կ'ընտանենան իրարու: Այսպէս Մէնսայի մօտ ցորենի շտեմարանին մէջ էգ կատու մը չորս հատ մուկի ձագերու կաթ կուտար՝ երբ տէրն ներս մտաւ: Զօրսէն երկուքը հարուածելով սատկեցուց, կատուն զանազան ձևերով քծնելով աղաչելով երկուքն աղատեց: Տանտէրն հետաքրքիր՝ թողուց աղատ երկուքն: Օր մը պիտի ուտէ՞ արդեօք զանոնք կատուն, թէ յիրաւի՝ մուկերու բարեկամ է:

Ոսկեխոյզ կապիկներ. — Դրսնդվապի բնակիչ մ'որ ոսկեհատերու մէջ կ'ըզբաղէր՝ երկու սղտիկ ու աշխոյժ կապիկներ ունէր, որք ամեն օր իրեն հետ կը մանէին ոսկեհատին մէջ եւ մինչեւ երեկոյ չէին բաժնուեր իրենց աէրէն: Կապկաց նմանուղութիւնն ծանօթ է. օր մը՝ դուցէ թէ առաջուց միաբանած՝ կ'ըսկին ասոնք ի գործ, եւ այնպէս ճարտարութեամբ կը գործեն, մինչեւ տէրը հմայուելով՝ ուրիշ 24 հատ եւս կը գնէ այս ձրի վաստակող աշխատաւորներէն: Պատուաւոր էին ամենքն ալ,

ոչ ոք գտած զեղեցիկ կտորներէն մարմնոյն անծանօթ կողմերն պահել խորհած էր. չկար ոչ վարձատրութիւն պահանջող, ոչ խմող, ոչ ծուլացող, ոչ ոք գատաստանի կամ իրաւարարութեան կարօտ եղած էր: Կենթագրուի թէ տէրն ըստ ամենայնի զոհ էր իր այս քառաձեռնի գործաւորներէն:

Նոր անդէկութիւն մը այս ծանօթութիւնը կը պսակէ. ի Կալիւթա, կ'ըսէ լրագիր մը, կապիկներու վարժարան մը բացուած է, ընթերցումն եւ զիր կը սորվին, սքանչելի արդիւնք տուած է: . . .

Բայց այդ լրագիրն մոռցած է ըսելու՝ թէ ո՞ր լեզուի ընթերցումն կամ զիր կ'աւանդուի, անշուշտ կապկերեցի:

Լորտնուկներու (Limace) ձարտարութիւնն. — Gardener's Chronicle թերթին թղթակիցն կ'ըսէ՝ թէ լորտնուկներն սարգերու եւ այլ մի քանի տեսակ զեռնոց նման կրնան բարձր տեղէ մը դէպ ի խորն իջնել, հիւսկէն թեւ մը ձգելով վերէն դէպ ի վար: Արդէն ուրիշ անգամ յիշատակուած էր այս, այլ անհաւատալի թուած: Այս քննութեան մէջ լորտնուկն վարէն պատի մը վրայ կ'ելլէ եւ ապակեայ թաղարի մը կառչելով կը հասնի մէջը անկուած բոյսին ծայրն. ուր բաւական ժամանակ մնալէ յետոյ՝ կը հիւսէ իր թեւն եւ ապահով վար կ'իջնէ:

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

ԵՐԿՐԱԳՐԱԿԱՆ. Խաղաղականին ամենեւ մեծ խորութիւնն. — Պ. W. J. L. Wharton Խաղաղական Ովկիանոսի մէջ հարաւային $23^{\circ} 40'$ լայնութեան եւ արեւմտեան $175^{\circ} 10'$ երկայնութեան աստիճանին վրայ՝ (Կրկնութիւն)՝ 4900 բազկաչափ խորութիւն գտած է, զունդն խորտակած է առանց յատակին հասնելու: Երկու անգամ պատահած է այդ: Յուսարի է թէ վերջապէս ճիշդ չափն դանուի: Թուի թէ ճարտնի ծովու խորութենէն՝ որ 3000 մեղր է, հիւսիսային $38^{\circ} 30'$ եւ արեւելեան 135° աստիճանի վրայ, սա 245 բազկաչափ աւելի է: Պ. Wharton ի նշանակած չափն է 8918 մեղր:

Երկրաբանական խոզարկութիւն. — Revue Scientifique
 Կը հաղորդէ՝ թէ Պ. Sven Hedin Պամիրի դուրսնին Քաշգար
 լեռանց ամենէն բարձր սեպին վրայ ելլալ փորձած է վերջերս :
 Սարին բարձրութիւնն 7500 մեզր է դրեթէ : Տեղական աւան-
 դութիւնն կ'ըսէ՝ թէ կատարին վրայ լիճ մը կայ եւ գետակ եւ
 ճերմակ ուղտ մը : Գեղեցիկ դրախտ մը, յորում հինաւուրց ծե-
 րունիներ ճերմակ վիրարկուաւ երկայն ալեօք չորեւեռաց տակ
 կը ճիւղն . . . հնազոյն քաղաք մը կայ հոն, Յունիստօր, ան-
 յիշատակ դարուց արձան. հոն մարդիկ երանիկ են . բնակիչքն
 ուրիշ քաղաքաց բնակներուն հետ հաղորդակցութիւն չունենա-
 լով՝ անդորր էին յոյժ. թշուառութիւն, խաւար, ցուրտ եւ մահ
 անձանօթ էր հոն : Թուի թէ այս հրաշալեաց սիրով վառուած
 Պ. Sven Hedin չորս անգամ փորձեց հասնիլ այդ տեղ : Մինչեւ
 4850 մեզր բարձրացաւ, այլ լեռան ախտն, օդն, անձաւք, քա-
 մին եւ ցուրտն յուսահատեցուցին զինքն :

ԱՍՏԵՂԱԲԱՇԽԱԿԱՆ. Երեւակի մանեկաց վրայ Լոր Էրե-
 ւոյթք. — Ինչպէս ծանօթ է՝ երկար ժամանակէ ի վեր կը հա-
 մարին՝ թէ Երեւակի մանեակներն փոքր եւ անջատ մտրմի-
 ներ ըլլան, մոլորակին հաստրակածային ուղղութեամբն ցրուած .
 որք իբր երկրորդական մոլորակներ իրենց մօր վրայ կը չրջին ,
 եւ այնչափ աւելի արագութեամբ՝ որչափ աւելի մօտ են իրենց
 կեդրոնական մեծ մոլորակին. այս Քեքլերի երրորդ օրէնքն է :

Ուստի, Kecler ուսուցիչն ամերիկացի, Ալլէկէնիս լեռանց
 դիտարանէն նոր քննութեամբ մը կը հաւատօթ զայդ . մանե-
 կին երկու ծայրերուն՝ տրեւելեան եւ արեւմտեան՝ լուսադիտին
 մէջ դժած դժերն զիտելով, ուղեց մեր տեսութեան շառաւիղին
 ուղղութեամբն շարժման երազութիւնն որոշել. որով մէկ կողմը
 մեղ մօտենայ եւ միւսն հեռանայ : Արեւու վրայ ըրած յաջող
 փորձն ի դործ դնելով՝ տեսաւ որ ներքին մանեակն շատ աւելի
 երազ չրջան ունի քան արտաքինն :

Գրեթէ մի եւ նոյն տտեն Պ. Deslandres Լուսնթաղի հա-
 մար ի դործ զրած միջոցն ու գործիքն փորձեց երեւակի վրայ
 եւ նոյն արդեանց յանգեցաւ. այլ ոչ թէ նոյն կազմական բնու-
 թիւնն ընդունելով :

Մաարիտի երկնաբարից քննութիւնն. — Վալլըքայի մէջ

(Մատրիաի քով) փետրուար 10 ին ինկած երկնաքարն թէպէտ
եւ փոքրիկ յոյժ՝ այլ լաւական էր զննութիւն կատարելու։ Պ.
Mennier Թանգարանին ուսուցիչն հետեւեալ լաքտարութիւնն
տուաւ.

Մթնոլորտաքարին նիւթոյն գորշ այլ սլայձառ զոյնն հա-
կադիր է տեղ տեղ տեսնուած կեղեւին մթին զոյնին։ Ըստ ուղ-
ղութեան ընթացից կեղեւն յատուկ տեսք առած է, որով մըթ-
նոլորտին մէջէն անցած պտհուն առաջին եւ հետեւորդ կողմն
կը հասկցուի։ Երեսը այրած սեւ գոյն ունի, կոնակը աւելի
թանձր է ու խոր սեւութեամբ։

Քարին մէկ կողմէն մինչեւ միւսն՝ տեղ տեղ սեւ եւ մերթ
երկու հազարամեղրէ աւելի թանձր երակներ կ'անցնին։ Ընդ-
հանրապէս չըջապատէն զէպ ի մէջ տեղ զմեկով, ցանցակերպ
հիւսուելով։

Այդ կտորին խտութիւնը՝ 16 աստիճանի բարեխառնութեամբ
հաւասարած է 3,598 ի։

Մանրացոյց գործեալ, եղեգնիկով, հեղանիւթներով եւ այլ
միջոցներով քիչ մը փոշւոյն վրայ կատարուած փորձեր, մագ-
նիտական մեծ ոյժ ունեցող մետաղական հատիկներ ցոյց տուին
մէջը. նիքելախառն երկաթի, երկաթի ծծմբուկի, եւն. որով
1882 փետրուար 3 ին Դրանսիոյ մէջ ի Մոկս ինկածին՝
եւ 1887 ին ապրիլ 7 ի Հնդկիս Լալիդբուրի երկնաքարին նման։

Լուսնի սկաւառակին առաջն սեծութիւնն. — Լուզովիկոս
ԺԴ ի արքունեաց մէջէն մէկն ըսած էր՝ թէ իր երկրին մէջ
Լուսինն աւելի մեծ կ'երեւոր քան ի Վերոպլ։ Հեղնած էին
զինքը, այսօր իրաւունք կուտան Աստղաբաշխը ոմանք քննե-
լով հաւատած են՝ թէ Լուսնի առերեւոյթ արամազիծն հովիտ-
ներու մէջէն աւելի մեծ կ'երեւի քան բնականն։ մթնոլորտին
մէջ ջրեղէն զոլոչւոյն առատութենէն։ Պ. Le Briero նոյն փորձն
ըրած է Ֆինիսդերի մէջ։

ԿՈՄԻՏԱՍ Ա. ՈՍԿԵԱՆ

ԱՌՁԵՌՆ

ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆ-ԳԱՂՂԻՆԵՐԷՆ

Նոր տպագրութիւն (երկրորդ)

Ուղղեալ եւ յաւելեալ

աւելի քան 50000 բառ, ոճ եւ այլն,

Սոյն օգտակար գործ՝ կը բովանդակէ հայերենի ընթացիկ բոլոր բառերէն զտա՝ դիտական եւ արուեստական, բաղմամբիւ բառեր, ոճեր եւ առացուածներ, իրենց զազդ. թարգմանութեամբն Ռաֆիգ զանազան առումները բացատրուած են բաղմամբիւ օրինակօք:

Գործոյն վերջն աւելցուած է զազդ. լեզուի անկանոն եւ պակասաոր բայից տարզ ժամանակներու ցանկն՝ հանդերձ պիտանի եւ կարեւոր ծանոթութեամբ: Էջ իւր 1000, ընտիր թուղթ, մաքուր տպագրութիւն:

Գին	{	զօրաւոր քառուրդն զահեկան	25
		լաթակաշմ	» 27
		կիսակաշի	» 32

Կեդրոնատեղին է Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ վաճառատուն, թիւ 27, Ֆինճանճըլար, Կ. Պօլիս: Կը գանուի Պ. ՊԱԼԵՆՅԻ եւ բոլոր հայ գրալաճատաց քով, ինչպէս նաեւ Բերա, Մեծ Վազոյ, ՎԱՅՍԻ եւ ՔԱՅԼԻ գրալաճառանոցները, եւ Ղալաթիա Մահմուտիէ ճատոնսի, թիւ 42, ՌՕՄԱՆ եւ ԸՆԿ. թղթա-վաճառանոցն:

ՊԱՏԿԵՐ տասն եւ հինգ օրը մի անգամ կը հրատարակուի :

Բաժանորդագրութեան տարեկան գինն է
Կ. Պօլսոյ համար 40 դահեկան :
Գաւառաց եւ օտար երկիրներու համար
բղրատարի ծախքն ի միասին հաշուելով 50 « «

Խրաքանցիւր թիւ 2 դահեկան

ՊԱՏԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերա , Եւշիլ փողոց
Թիւ 1 , ուր պետք է դիմել բաժանորդագրութեան եւ քերթին
վերաբերեալ այլ ամենան խնդրոց համար :

RÉDACTION DU BADGUERE

Constantinople, Péra, rue YÉCHIL N ° 1

معارف نظارت جلیله سنک رخصتیه طبع اولنشد